ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով բենզին ռեգուլյար /այսուհետ Ապրանք/ ձեռքբերման գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 13.08.2019 ժամը 12.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/ Հ. Սարոյանը

Անդամներ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Ռ. Տ. Սահակյանը

Հ. Հարությունյանը

Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Լ. Կաբասակալյանը

Կ. Եսայանը

Հանձնաժողովի քարտուղար՝

Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

1. **Ընդունել ի գիտություն.**

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը ՀՀ պետական եկամուտների կոմիտեին /Կոմիտե/ կատարել է հարցում՝ ՍԻՓԻԷՍ ՕԻԼ Քորփորեյշն և ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՍՊ /համատեղ գործունեություն/կոնսորցիում/ ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ, ինչպես նաև հրավերով ֆինանսական միջոցներ որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

1.2 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջել ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ/ պարբերությամբ պահանջվող՝ որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը. ապրանքի տեխնիկական բնութագիրը, առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (ամբողջական նկարագիր), ինչպես նաև հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը. /13.05.2019 թիվ 2/2019 Համատեղ գործունեության պայմանագրով նախատեսված/:

2. **Հանձաժողովը արձանագրեց**

2.1 Կոմիտեից սահմանված ժամկետում մասնակցի վերաբերյալ՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով տեղեկատվություն չի ստացվել:

2.2 Էլեկտրոնային եղանակով ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՍՊ ընկերության կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացվել են սահմանված ժամկետում /13.05.2019 թիվ 2/2019 Համատեղ գործունեության պայմանագրի 1.3 կետով սահմանված՝ Գործակալ 1-ը՝ ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն ՍՊ ընկերությունը ներկայացրել է Հրավերով պահանջվող փաստաթղթերը /կցվում են//:

3. Հանձնաժողովը որոշեց

3.1 Համաձայն Կարգի 44-րդ կետի նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում Կոմիտեն էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում տեղեկատվություն չտրամադրվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

3.2 Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

3.3 Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՍՊԸ /ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն ՍՊԸ-ի հետ /համատեղ գործունեություն /կոնսորցիում/ 1 չափաբաժնով ճանաչել **ընտրված մասնակից:**

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հ. Սարոյան

անդամներ՝ _____ Ռ. Տ. Սահակյան

_____ Հ. Հարությունյան

_____ Լ. Կաբասակալյան

_____ Կ. Եսայան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան